Արձանագրություն N 2
ՓՍՍ-ԳՀԾՁԲ-18/9 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բյուզանդի 1/3, 205 սենյակ **01.11.2018թ**
ժ. 14:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Մաղաքյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Մանասյանը, Լ. Բաբաջանյանը, Ա. Անանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Ղազարյանը

1. **Գնանշման հարցման հայտերի բացման մասին**
(Վ. Մաղաքյան)

Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	**«Մ Վ Սերվիս» ՍՊԸ**	-	ք. Երևան, Ազատության 27, տնօրեն՝ Վ. Մխիթարյան, հեռ. 098 688 788, էլ. հասցե՝ mv@toner.am, ՀՎՀՀ 00130965

Հրավերով սահմանված՝ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու, բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին նախնական տվյալներով համապատասխանում են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	**«Մ Վ Սերվիս» ՍՊԸ**	
		Առանց ԱԱՀ	Ընդամենը
1	Պատճենահանող սարքերի պահպանման ծառայություններ	268125	321750
2	Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ	150550	180600

Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգի քարտուղարը գնահատման թերթիկների երկուական օրինակ հանձնեց հանձնաժողովի անդամներին:

Որոշում թիվ 2.
Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

Մասնակցի հայտի գնահատման չափանիշները Գնահատականը			Մասնակցի հայտի գնահատման արդյունքները
			Մասնակցի անվանումը
			«Մ Վ Սերվիս» ՍՊԸ
1	Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին	Բավարար Անբավարար	բավարար
2	Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին	Բավարար Անբավարար	բավարար

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	Բավարար Անբավարար	Բավարար

Որոշում թիվ 3.

Հանձնաժողովը որոշեց բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար հետևյալ հիմնավորմամբ՝ հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Որոշում թիվ 4.

Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել.

- 1-2-րդ չափաբաժինների մասով «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Որոշում թիվ 5.

Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ կետերը հանձնաժողովը որոշեց՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Վ. Մաղաքյան)

Որոշում թիվ 6.

Հանձնաժողովը որոշեց ՓՍՍ-ԳՀԾՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:30-ին, ք. Երևան, Բյուզանդի 1/3, 205 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		**Վ. Մաղաքյան**
Անդամներ՝		**Դ. Մանասյան**
		Լ. Բաբաջանյան
		Ա. Անանյան
Քարտուղար՝		**Հ.Ղազարյան**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 01.11. 2018թ.

ՓՍՍ-ԳՀԾՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ. Մաղաքյանս, անդամներ՝ Դ. Մանասյանս, Լ. Բաբաջանյանս և Ա. Անանյանս, քարտուղար՝ Հ. Ղազարյանս, հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ ՓՍՍ-ԳՀԾՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Վ. Մաղաքյան _____

Դ. Մանասյան _____

Լ. Բաբաջանյան _____

Ա. Անանյան _____